

ՌԵԳՈ ԱՌՈՂՋ ԸՆՏԱՆԻՔ

Բժշկական ապահովագրություն



Ապահովադիր

18տ. լրացած ֆիզ.անձ



Ապահովագրված անձ

Նվագագույնը 2 անձ՝ Ապահովադիրը և վերջինիս 18-65 տարեկան կինը/ամուսինը, 1-17 տարեկան երեխաները



Վկայագրի գործողության ժամկետ

1 տարի
















Ուժի մեջ է մտնում

Վկայագրի կնքումից 5 օր հետո

| Ծրագիր | Ապահովագրության դաս | Ապգումար յուրաքանչյուր անձի համար | Ապվճար յուրաքանչյուր անձի համար |
|----------------------|------------------------------|-----------------------------------|---|
| «ՌԵԳՈ ԱՌՈՂՋ ԸՆՏԱՆԻՔ» | Առողջության ապահովագրություն | 3,000,000 ՀՀ դրամ | 18-65 տարեկան՝ 200,000 ՀՀ դրամ 1-17 տարեկան՝ 160,000 ՀՀ դրամ |



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

-  Շտապ բժշկական օգնություն և բժշկական տեղափոխում
-  Բազային հիվանդանոցային բժշկական օգնություն
-  Սրտային վիրաբուժություն, ներանոթային միջամտություններ
-  Քրոնիկ հիվանդություններ
-  Ուռուցքաբանություն
-  Այլ հիվանդանոցային ծախսեր
-  Ամբուլատոր (արտահիվանդանոցային) բժշկական օգնություն
-  Տարեկան կանխարգելիչ բժշկական զննում
-  Տնային պայմաններում բուժօգնության տրամադրում
-  Դեղամիջոցներ, բժշկական պարագաներ
-  Ատամնաբուժություն
-  Հղիության վարում և ծննդօգնություն
-  Բուժում արտասահմանում



1. ՇՏԱՊ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ

- 1.1. Շտապ օգնության շուրջօրյա այց, անհրաժեշտության դեպքում՝ հատուկ սարքավորումներով հազեցված մասնագիտացված անձնակազմի կանչի կազմակերպում,
- 1.2. Անհետաձգելի ախտորոշիչ և բուժական միջոցառումների իրականացում կանչի վայրում,
- 1.3. Անհետաձգելի բուժօգնության համար անհրաժեշտ դեղորայքի և բժշկական պարագաների ապահովում,
- 1.4. Բժշկական էվակուացում (բացառապես ցամաքային փոխադրամիջոցներով)՝ հիվանդանոցային պայմաններում հետազոտման և բուժման անհրաժեշտության դեպքում՝ անհրաժեշտ մասնագիտացում ունեցող բժշկական անձնակազմի ուղեկցությամբ,
- 1.5. Հիվանդի տեղափոխում այլ բժշկական հաստատություն (այդ թվում՝ ՀՀ մարզերից դեպի ք. Երևան՝ բացառապես ցամաքային փոխադրամիջոցներով)՝ բժշկական անհրաժեշտության դեպքում:

2. ԲԱԶԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- 2.1. Հիվանդանոցային բուժում պահանջող Սուր հիվանդությունների Հրատապ կարգով իրականացվող թերապևտիկ և/կամ վիրահատական բուժում, ինֆեկցիոն հիվանդությունների բուժում,
- 2.2. Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած Դժբախտ պատահարի արդյունքում առաջացած վնասվածքների (կտորվածքներ, հոդախախտեր, վերքեր, սալջարդեր, պոլիտրավմաներ) վիրահատական բուժում (ներառյալ մետաղական կոնստրուկցիաների արժեքը՝ բացառությամբ էնդոպրոթեզների), այրվածքների, ցրտահարությունների, էլեկտրահարությունների, սուր թունավորումների բուժում,

- 2.3. Վերակենդանացում և ինտենսիվ թերապիա (պետ պատվերի շրջանակներից դուրս՝ համավճարի չափով),
- 2.4. Սուր ներքին և արտաքին արյունահոսությունների դեպքում արյան և արյան բաղադրիչների փոխներարկում,
- 2.5. 2.1 – 2.4 կետերով նախատեսված դեպքերով ստացիոնարում գտնվելու ժամանակ լաբորատոր և գործիքային հետազոտություններ, ներառյալ նախավիրահատական սխեմայի շրջանակներում վիրուսային B և C հեպատիտների, ՄԻԱՎ և ՄՌՊ անալիզների իրականացում,
- 2.6. 2.1 – 2.4 կետերով նախատեսված դեպքերով ստացիոնարում գտնվելու ժամանակ անհրաժեշտ դեղորայքով և բժշկական պարագաներով ապահովում:

3. ՄՐՏԱՅԻՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, ՆԵՐԱՆՈԹԱՅԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

- 3.1. Հրատապ կարգով իրականացվող սրտի վիրահատական և/կամ ներանոթային միջամտություններ, նյարդավիրաբուժական ներանոթային միջամտություններ Պայմանագրի գործողության ընթացքում 1,000,000 ՀՀ դրամի սահմաններում, մասնավորապես՝
 - 3.1.1 Կորոնարոգրաֆիա. հատուցվում է, եթե առկա են սուր ինֆարկտին բնորոշ արտահայտված նշաններ, այն է՝ ԷՍԳ –ով որոշված տվյալներ (ST էլևացիա և այլն), կենսաքիմիական մարկերների (տրոպոնին) համապատասխան փոփոխություններ՝ համադրությամբ այլ բժշկական տվյալների հետ,
 - 3.1.2 ՀՏ անգիոգրաֆիա
 - 3.1.3 Կորոնար զարկերակների ստենոտավորում և բալունային անգիոպլաստիկա՝ ներառյալ բալունի, դեղապատ կամ ոչ դեղապատ ստենտերի արժեքը հատուցվում են, եթե կորոնարոգրաֆիայով հայտնաբերվել է կորոնար զարկերակների 75% և ավելի, կամ խոշոր անոթի 55 % և ավելի նեղացում՝ համադրությամբ այլ բժշկական տվյալների հետ,
 - 3.1.4 Կաթետերային աբլյացիա և էլեկտրոֆիզիոլոգիական հետազոտություն
 - 3.1.5 Աորտո-կորոնար շունտավորում,

3.1.6 Աորտայի պրոթեզավորում՝ շերտազատվող աննրիզմայի կապակցությամբ,

3.1.7 Իշեմիկ կամ հեմոռագիկ կաթվածների կապակցությամբ իրականացվող նյարդավիրաբուժական ներանոթային միջամտություններ, մասնավորապես՝ ներգանգային ստենտավորում և անգիոպլաստիկա, աննրիզմայի պարուրակային օկլյուզիա, օնիքս:

**Պայմանագրի գործողության ընթացքում ավելացած Ապահովագրված անձանց համար գործում է Սպասման ժամկետ՝ 1 ամիս:*

Սույն ծածկույթում թվարկված դեպքերը հատուցվում են, եթե դրանք ներառված չեն ՀՀ ԱՆ «Կյանքի Ստենտ» ծրագրում

4. ՔՐՈՆԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

4.1. Ամբուլատոր բուժում պահանջող քրոնիկ հիվանդությունների սրացումներ:

4.2. Ստացիոնար բուժում պահանջող քրոնիկ հիվանդությունների սրացումներ

4.3. Քրոնիկ հիվանդությունների դինամիկ վերահսկման նպատակով իրականացվող խորհրդատվություններ, լաբորատոր և գործիքային հետազոտություններ, բուժում, աջակցող բուժման նպատակով նշանակված դեղորայք՝ 30,000 ՀՀ դրամի սահմաններում:

** Պայմանագրի գործողության ընթացքում ավելացած Ապահովագրված անձանց, համար գործում է Սպասման ժամկետ՝ 3 ամիս:*

5. ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

Հատուցվում են չարորակ նորագոյացությունների և արյան չարորակ հիվանդությունների հիվանդանոցային բուժման ծախսերը՝ Պայմանագրի գործողության ընթացքում 500,000 ՀՀ դրամի սահմաններում, մասնավորապես՝

5.1. Հատուկ և դժվարամատչելի հետազոտություններ,

5.2. Ոչ վիրահատական բուժում՝ հեռահար և/կամ ներխոռոչային ճառագայթային բուժում, քիմիոթերապիայի համար անհրաժեշտ դեղորայքի ձեռքբերում (սահմանաչափի մեջ է ներառված նաև բուժմանը նախորդող, բուժման ընթացքը վերահսկող լաբորատոր գործիքային հետազոտությունների արժեքները):

** Պայմանագրի գործողության ընթացքում ավելացած Ապահովագրված անձանց համար գործում է Սպասման ժամկետ՝ 3 ամիս:*


6. ԱՅԼ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ

6.1. Վճարովի հիվանդասենյակի տրամադրում (Ապահովագրական ծրագրով նախատեսված դեպքերով հոսպիտալացման ժամանակ)՝ յուրաքանչյուր Ապահովագրական պատահարով մինչև 10 օր, օրական մինչև 10,000 ՀՀ դրամ,

6.2. Ճողվածքի պլաստիկայի ցանցի, աչքի կատարակտայի վիրահատության համար արհեստական ոսպնյակների, էլաստիկ գուլպաների ձեռքբերման ծախսերի հատուցում՝ Պայմանագրի գործողության ընթացքում յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար 40,000 ՀՀ դրամի սահմաններում

7. ԱՄԲՈՒԼԱՏՈՐ (ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ) ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- 7.1. Առաջնային և կրկնակի խորհրդատվություններ ընդհանուր պրակտիկայի բժիշկների (թերապևտ, մանկաբույժ) և նեղ մասնագետների՝ ալերգոլոգ, գաստրոէնտերոլոգ, մաշկաբան, սրտաբան, նյարդաբան, վիրաբույժ, անոթային վիրաբույժ, ուռուցքաբան, ՔԿԱ, ակնաբույժ, պրոկտոլոգ, թոքաբան, ռևմատոլոգ, վնասվածքաբան, գինեկոլոգ, ուրոլոգ, ներզատաբան, վարակաբան և այլն,
- 7.2. Գործիքային հետազոտություններ՝ գերձայնային, ռենտգենաբանական, էնդոսկոպիկ, համակարգչային և մագնիսառեզոնանսային շերտագրում (մինչև 1,5 տեսլա ներառյալ) և այլն,
- 7.3. Լաբորատոր հետազոտություններ՝ կլինիկական, կենսաքիմիական, մանրէաբանական, իմունաբանական, հորմոնալ, բջջաբանական և այլն,
- 7.4. Տեսողության սրության ստուգում (վիզիոմետրիա, սկիասկոպիա և այլն),
- 7.5. Բուժման նշանակում, բժշկական միջամտությունների և/կամ մանիպուլյացիաների իրականացում ամբուլատոր պայմաններում, անհետաձգելի թերապևտիկ կամ վիրաբուժական հիվանդությունների ոչ վիրահատական բուժում ամբուլատոր պայմաններում, պլանային կամ անհետաձգելի վիրահատական միջամտություններ, ինֆեկցիոն հիվանդությունների բուժում,
- 7.6. Դժբախտ պատահարի հետևանքով առաջացած վնասվածքների (կոտրվածքներ, հոդախախտեր, փափուկ հյուսվածքների սալջարդ, վերքեր և այլն), այրվածքների, ցրտահարությունների և էլեկտրահարությունների, սուր թունավորումների և այլ վիճակների ախտորոշում և բուժում,
- 7.7. Վիճահարույց ախտորոշումների դեպքերում այլ մասնագետների կողմից երկրորդ կարծիքի ընձեռում (հատուցվում է միայն ախտորոշման կտրուկ փոփոխության դեպքում):



8. ՏԱՐԵԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԲԺՇԿԱԿԱՆ ՁՆՆՈՒՄ*

Կատարվում է ապահովագրողի կողմից առաջարկվող բուժ. հաստատություններից մեկում՝ Պայմանագրի գործողության ընթացքում մեկ անգամ՝

- 8.1. Արյան ընդհանուր քննություն լեյկոբանաձևով,
- 8.2. Մեզի ընդհանուր քննություն,
- 8.3. Էլեկտրասրտագրություն,
- 8.4. Որովայնի և փոքր կոնքի օրգանների ԳՁՀ (գերձայնային հետազոտություն),
- 8.5. Ակնաբույժի զննում, տեսողության սրության ստուգում,
- 8.6. Ընդհանուր պրակտիկայի բժշկի զննում և խորհրդատվություն,
- 8.7. Ընդհանուր պրակտիկայի բժշկի ցուցմամբ՝ այլ նեղ մասնագետների խորհրդատվություններ,
- 8.8. Գլուկոզայի և ընդհանուր խոլեսթերինի որոշում արյան մեջ, անհրաժեշտության դեպքում՝ լիպիդային պրոֆիլի որոշում,
- 8.9. Վահանաձև գեղձի ԳՁՀ,
- 8.10. Կանանց համար՝ գինեկոլոգի զննում, PAP թեստ (30տ. բարձր), կրծքագեղձերի ԳՁՀ, բժշկական ցուցման առկայության դեպքում՝ մամոգրաֆիա,
- 8.11. Տղամարդկանց համար՝ ուրոլոգի խորհրդատվություն, ուրոլոգի ցուցման դեպքում՝ PSA թեստ (40տ. բարձր):

** Նշված ծառայություններից կարող են օգտվել միայն 18 տարեկան լրացած անձինք:*

9. ՏՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ*

Նշված ծառայությունները հաստատվում են միայն առողջական վիճակից ելնելով բժշկական հաստատություն այցելելու անհնարինության դեպքում՝

- 9.1. Բժշկի (այդ թվում նեղ մասնագետի) տնային այցելություն,
- 9.2. Տնային պայմաններում լաբորատոր և գործիքային հետազոտությունների իրականացում,
- 9.3. Միջին բուժանձնակազմի ծառայությունների մատուցում տնային պայմաններում (ներերակային ներարկումներ և այլն):

** Երևան քաղաքում և մինչև 20 կմ հեռավորության վրա գտնվող տարածքներում սույն կետում նշված ծառայությունները կազմակերպվում են Ապահովագրողի կողմից, իսկ ավելի հեռու գտնվող տարածքներում Ապահովագրողը հաստուցում է Ապահովագրված անձին՝ տվյալ տարածքում գտնվող բժշկական հաստատությունների կողմից կազմակերպված այցերի հետ կապված ծախսերը:*

10. ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐ, ԲԺՇԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ

10.1. Սուր հիվանդությունների, Քրոնիկ հիվանդությունների սրացումների, կամ Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած Դժբախտ պատահարների արդյունքում առաջացած հետևանքների բուժման նպատակով նշանակված դեղամիջոցներ, ինչպես նաև անհրաժեշտ բժշկական պարագաներ՝ ներարկիչներ, ներերակային ներարկման համակարգեր և կաթետերներ, վիրակապական պարագաներ,



10.2. Անշարժացնող սարքավորումներ՝ Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած Դժբախտ պատահարների արդյունքում առաջացած վնասվածքների բուժման համար,

10.3. Նշանակված օպտիկական լինզաների, ապակիների և/կամ շրջանակների ձեռքբերման ծախսեր՝ Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար մինչև 20,000 ՀՀ դրամի սահմաններում:

11. ԱՏԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ*

11.1. Պայմանագրի գործողության ընթացքում հատուցվում են ատամների հետ կապված հետևյալ ծախսերը՝ Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար մինչև 45,000 ՀՀ դրամի սահմաններում՝

11.1.1. Ատամների բուժում՝ կարիոզ խոռոչի մշակում և պլումբավորում լուսակարծրացող պլումբանյութով, արմատային խողովակների մշակում և արմատալիցք, պերիոդոնտիտի բուժում,

11.1.2. Վիրաբուժություն՝ ատամների հեռացում, ատամի մասնակի հեռացում, հարարմատային պարկերի հեռացում, թարախակույտերի բացում

11.1.3. Տեղային անզգայացում՝ ինֆիլտրացիոն, ապլիկացիոն, հաղորդչական,

11.1.4. Ախտորոշում (ռենտգեն հետազոտություն և այլն):

11.2. Ատամնաքարերի մաքրում և ատամների փայլեցում՝ Պայմանագրի գործողության ընթացքում մեկ անգամ, յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար 10,000 ՀՀ դրամի սահմաններում:

**Ոչ գործընկեր ատամնաբուժարան դիմելու դեպքում Ապահովագրված անձը Ապահովագրողի պահանջով անցնում է հետբուժական զննում: Հետբուժական զննման պահանջից հրաժարվելու դեպքում, Ապահովագրողը կարող է մերժել ներկայացված հայտը:*



12. ՀՂԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՄ ԵՎ ԾՆՆԴՕԳՆՈՒԹՅՈՒՆ*

12.1. Հղիության վարման շրջանակներում հատուցվում են բժշկական հաստատություններում Պետպատվերից դուրս կրած ծախսերը՝ յուրաքանչյուր հղիության դեպքով 60,000 ՀՀ դրամի սահմաններում, մասնավորապես՝

12.1.1. Հղիության վարում վճարովի հիմունքներով՝ Ապահովագրված անձի կողմից ընտրած բուժ. հաստատությունում,

12.1.2. Հղիության սկրինինգի համար անհրաժեշտ հետազոտությունները, ներառյալ ժառանգական հիվանդությունների և սեռական ճանապարհով փոխանցվող ինֆեկցիաների հայտնաբերմանն ուղղված հետազոտությունները:

12.1.3. Պաթոլոգիկ ընթացքով հղիության պահպանում ստացիոնար պայմաններում և/կամ հղիության ընդհատում բժշկական ցուցումներով՝ ներառյալ դեղորայքը և վճարովի հիվանդասենյակը (բացառությամբ սեռական ճանապարհով փոխանցվող ինֆեկցիաներով պայմանավորված դեպքերի)՝ յուրաքանչյուր հղիության դեպքով 90,000 ՀՀ դրամի սահմաններում:

12.2. Ծննդոգնության շրջանակներում հատուցվում են բժշկական հաստատությունում պետ. պատվերից դուրս կրած ծախսերը (հարմարավետ հիվանդասենյակ և այլն)՝ յուրաքանչյուր հղիության դեպքի համար օրական մինչև 20,000 ՀՀ դրամ, առավելագույնը 4 օր:

**վերը նշված ծախսերը հատուցվում են միայն այն դեպքում, եթե հղիությունն առաջացել է ապահովագրվելուց հետո:*



13. ԲՈՒԺՈՒՄ ԱՐՏԱՄԱՀՄԱՆՈՒՄ

13.1. Հատուցվում են ՀՀ տարածքից դուրս կատարված այն հիվանդությունների բուժման հետ կապված ծախսերը, որոնք նախատեսված են սույն Պայմանագրով, ախտորոշվել են ՀՀ տարածքում՝ Պայմանագրի գործողության ընթացքում, և տվյալ բուժումը հնարավոր է իրականացել նաև ՀՀ-ում: Ծախսերը հատուցվում են ՀՀ-ում գործող բժշկական հաստատությունների կողմից այդ ծառայությունների համար սահմանված միջին գների չափով:

ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն բաժնում նշված բացառությունները վերաբերվում են Ապահովագրական ծրագրի մեջ ներառված բոլոր բժշկական ծառայություններին, եթե որևէ բժշկական ծառայության մասով այլ բան նախատեսված չէ.

1.1. Առաջին անգամ ապահովագրվող անձանց համար՝ հիվանդությունները/վիճակները, որոնք ախտորոշվել են միջև ապահովագրության սկիզբը և/կամ հայտնաբերվել են նախնական բժշկական զննման արդյունքում,

1.2. Բնածին անոմալիաներ, զարգացման արատներ, դեֆորմացիաներ, ժառանգական և զենետիկ հիվանդություններ այդ թվում պոչուկի էպիթելային ուղիներ, և դրանց բարդությունները (բուժում և հետազոտություններ, այդ թվում՝ բացահայտմանն ուղղված հետազոտություններ), քրոմոսոմային խանգարումներ, նյութափոխանակության խանգարումներ (ճարպակալում, մազաթափություն, վիտամին Դ և այլն),

1.3. Հոգեկան հիվանդություններ, Փսիխոպաթիա, Փսիխոզ, ներքոներ և սահմանային վիճակներ (նեյրոցիրկուլյատոր դիստոնիա, վեգետատաանոթային դիստոնիա, տագնապային համախտանիշ և այլն), քնի խանգարումներ,

1.4. ՄԻԱՎ/ՁԻԱՀ և աջակցող ուղեկցող (իմունային անբավարարությամբ պայմանավորված) հիվանդությունները և բարդությունները, վիրուսային հեպատիտներ B, C, D,E մանրէակրություն, վիրուսակրություն, մակաբուժակրություն, դիսբակտերիոզի և պարազիտակրության համար նախատեսված հետազոտությունները և բուժումը:

1.5. Առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ (սիֆիլիս, գոնորեա, խլամիդիա, տրիխոմոնադա, միկոպլազմա, ուրեապլազմա, գենիտալ հերպես, պապիլոմավիրուս և այլն), բակտերիալ վագինոզ (գարդներելլա), միզասեռական օրգանների սնկային ախտահարումներ, ուրոգենիտալ բորբոքումներ (քրոնիկ պրոստատիտ և այլն),

1.6. Մաշկի և եղունգների սնկային ախտահարումներ (կանդիդոզ, սեբորեա, գունափոփոխ որքին, օնիխոմիկոզ և այլն), փտորիազ, ատոպիկ դերմատիտներ,

1.7. Մաշկի բարորակ գոյացություններ՝ կոշտուկներ, պտկիկներ, գորտնուկներ, խալեր և այլն,

1.8. Ողնաշարի, միջողնային սկավառակների դեգեներատիվ դիստրոֆիկ ախտահարումներ, միջողնային սկավառակների ճողվածքներ, պրոթրուզիաներ, օստեոխոնդրոզ, սկոլիոզ, կիֆոզ, արթրոզներ, օստեոպենիա, օստեոպորոզ այլն:

1.9. Շաքարային դիաբետ (I, II տիպ), դրանց բարդությունները ախտորոշում և բուժում:

1.10. Շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդություններ (համակարգային կարմիր գայլախտ, ռևմատոիդ արթրիտ, արթրոզներ, դերմատոմիոզիտ), համակարգային վասկուլիտներ (հանգուցավոր պերիարտերիիտ, հեմոռագիկ վասկուլիտ), ամիլոիդոզ, սարկոիդոզ, այլ աուտոիմուն հիվանդություններ,

1.11. Թոքերի ոչ յուրահաստուկ քրոնիկ հիվանդություններ (բրոնխոէկտազիա, թոքերի էմֆիզեմա, պնևմոսկլերոզ և այլն), սրտի ձեռքբերովի արատներ, հետինֆարկտային կարդիոսկլերոզ, դիլատացիոն կարդիոմիոպաթիա, ինչպես նաև դրանց հետևանքով առաջացած շնչառական և սրտային անբավարարությունը,

1.12. Դեմիելինիզացնող և այլ նեյրոդեգեներատիվ հիվանդություններ

2. Ապահովագրողն ազատվում է հատուցման պարտավորություններից, եթե ներկայացված ծախսերը կապված են հետևյալ բժշկական ծառայությունների հետ.

2.1. Քրոնիկ հիվանդությունների/վիճակների (զարկերակային հիպերտենզիա, էնդոկրինոպաթիաներ, մաստոպաթիա և այլն) աջակցող բուժում և/կամ դինամիկ վերահսկում, բարորակ և չարորակ նորագոյացությունների դինամիկ վերահսկում՝ Պայմանագրի գործողության ընթացքում դրանց առաջնային ախտորոշումից հետո,

2.2. Սեռական և վերարտադրողական ֆունկցիաների խանգարումների հետ կապված հետազոտությունները և բուժումը (իմպոտենցիա, անպտղություն, դաշտանային ֆունկցիայի և/կամ սեռական հորմոնների խանգարումներ և այլն), արհեստական բեղմնավորումը, հակաբեղմնավորիչ դեղամիջոցները և միջամտությունները (այդ թվում՝ ՆԱՊ-ի տեղադրումը և հեռացումը), հղիության ընդհատում առանց բժշկական ցուցման,

2.3. Վերականգնողական վիրահատություններ և էնդոպրոթեզավորում (բացառությամբ ապահովագրության գործողության ժամանակ առաջացած և լիազոր մարմինների կողմից համապատասխան փաստաթղթերով հիմնավորված դժբախտ պատահարների հետևանքների), օրգանների և հյուսվածքների փոխպատվաստում,

2.4. Կոսմետիկ նպատակով իրականացվող վիրահատություններ, օրթոպեդիկ վիրահատություններ, տեսողության արատի շտկում (էքսիմեր լազերային վիրահատություններ, քրոսլինքինգ(կատարակտա, կերատոկոնուս) և այլն), սեռի վիրաբուժական փոփոխում,

2.5. կանխարգելիչ նպատակով նշանակված հետազոտություններ և/կամ բուժում՝ ջրային պրոցեդուրաներ, ցելխաբուժություն, սոլյարի, հիպերբարիկ օքսիգենացում, կրիոթերապիա, սանատոր-կուրորտային բուժում և այլն, կանխարգելիչ նպատակով իրականացվող հետազոտություններ (այդ թվում՝ ալերգենների նկատմամբ զգայունյության որոշում), կոսմետոլոգիական ծառայություններ (էպիլյացիա և այլն), քաշի կարգավորում,

2.6. Արտամարմնային բուժման մեթոդները (հեմոդիալիզ, պլազմաֆերեզ և այլն) և դրանց նախապատրաստումը, աղիների մոնիթորինգային մաքրում (հիդրոկոլոնոթերապիա),

- 2.7. Հոգեթերապևտի ծառայություններ, հիպնոզ, խոսակցական արատների շտկում,
- 2.8. Մեքենավարման, զինակրության, որոշ աշխատանքներ իրականացնելու և/կամ ցանկացած այլ թույլտվություններ ստանալու նպատակով բժշկական հետազոտությունների անցկացում և տեղեկանքների տրամադրում,
- 2.9. Բժշկական սարքավորումների ձեռքբերման և հարմարեցման հետ կապված ծախսեր, այդ թվում՝ սրտի աշխատանքը վերասինխրոնացնող սարքեր (պեյսմեյկերներ, կարդիովերտեր-դեֆիբրիլյատորներ) և այլ իմպլանտներ (ներառյալ տեղադրումը), պրոթեզներ, հաշմանդամային սայլակներ, տոնոմետրներ, գլյուկոմետրներ, ջերմաչափեր, լսողական սարքեր և այլն,
- 2.10. Այլընտրանքային և փորձարարական բժշկության մեթոդներ՝ տզրուկաբուծություն, ռեֆլեքսոթերապիա, լազերային թերապիա, օզոնաթերապիա, բիոռեզոնանս, հոմեոպաթիա, բուսաբուծություն/ֆիտոնիրինգ և այլն,
- 2.11. Կենսաակտիվ հավելումներ, հոմեոպատիկ դեղամիջոցներ, բժշկական սննդային խառնուրդներ, կոսմետիկ և այլ պարաֆարմացևտիկ միջոցներ, խոտաբույսեր, տարբեր ծագման յուղեր, դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի կողմից չգրանցված դեղորայք:
- 2.12. Ցանկացած այլ բժշկական և/կամ հարբժշկական ծառայություններ, որոնք նախատեսված չեն Ապահովագրական ծրագրով, այդ թվում՝ ատամների ձերմակեցում և այլ կոսմետիկ միջամտություններ, լնդերի բուժում, ատամնաբուժական օրթոդոնտիա, օրթոպեդիա, իմպլանտացիա, պատվաստումներ բացառությամբ պայմանագրով նախատեսված դեպքերում: